Արձանագրություն N 2

ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ 32/15 ծածկագրով «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար հաշվապահական հաշվառման և կադրերի ավտոմատացման ծրագիր և ծրագրի ներդրման ծառայությունների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի

ք. Երևան 29 դեկտեմբերի 2015թ. ժ. 10:00

Մասնակցում էին՝

| | | |
|---|---|---|
| Ա. Պետրոսյանը | - | Գլխավոր տնօրենի տեղակալ(նախագահ) |
| Ռ. Կիրակոսյանը | - | Գլխավոր տնօրենի տեղակա |
| Շ. Գրիգորյանը | - | ՆԻՎ-ի գլխավոր մասնագետ |
| Ա. Պետրոսյանը | - | ՊԲ-ի առաջատար մասնագետ (քարտուղար) |

Նիստին ներկա էր «Ասատրյանս» ՍՊԸ-ի լիազորված անձ Ալբերտ Ասատրյանը:

<u>Նիստի օրակարգը</u>

1.ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ32/15 ծածկագրով ներկայացրած հայտերի մասին:

2. Հրավեր ներկայացրած մասնակիցների գրաված տեղերի և մասնակիցներից համաձայն հրավերի պահանջվող փոստաթղթերի մասին:

3. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար հաշվապահական հաշվառման վարման (աութսորսինգային) ծառայությունների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի մասին:

<u>Հարց</u> 1.ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ 32/15 ծածկագրով ներկայացրած հայտերի մասին՝

1.1. Հայտ են ներկայացրել երկու կազմակերպություն՝

- «Հայկական ծրագրեր» ՍՊԸ – (հասցեն՝ ք. Երևան, Չարենցի 1),
- «Ասատրյանս» ՍՊԸ - (հասցեն՝ ք. Երևան, Բուլվար-Պլազա Բիզնես Կենտրոն, Արամի 64, 2-րդ հարկ):

1.2 «Հայկական ծրագրեր» ՍՊԸ-ն հայտը ներկայացրել է փակ ծրարի մեջ, ծրարի վրա, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի, գրված է Պատվիրատուի անվանումը, հայտերի ներկայացման հասցեն, ընթացակարգի ծածկագիրը, «Չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը, հայտը ներկայացնողի անվանումը, հասցեն, հեռախոսը:

1.3. «Հայկական ծրագրեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված են հրավերով նախատեսված բոլոր հավելվածները, ինչպես նաև հեղինակային իրավունքի մասին տեղեկանքը:

1.4. Համաձայն հրավերի ներկայացվել է հրավերի փաստաթղթերի մեկ բնօրինակ, մեկ պատճեն: